նոր Հաւաւիղ, որ կարեկից եղաւ Աբրահամ ցաւին հետ, ու սկսեց Հայաստանի համար մեկ անջինջ արձան կանգնեցնել. Աբրահամ ամենաղրով իւր հաւատացեալների ականջներումը ուսման և յառաջադիմութեան հնարքները տարփոդել, որպէս զի թողուն տգիտութիւնը և լուսաւորութեան եաւէն դնան։ Ահա ով ընթերցասէր եղբարք, եկէք ամենքեանքս համախուռ ժողով կազմած գառնանք դէպի Աբրահամը ասելով, "Հանիր քո սդդ շորերը ով որդեսէր Աբրահամ. թող ուրախութեան ծիածանը փայլի քո սրատես, հպարտ, աղդի ցաւը լացող, արտասուաթորմ աչքերի մէջ. պատրաստ եմք այսուհետև տգիտութեան գաղտնի դրուխը ջախջախել, անմեղութեամբ մնած օրիորդաց լուսաւորութեան եաւէն դնալ. պատրաստ եմք ամենայն տեղ օրիորդաց դպրոցների թիւը շատացնել, ամենայն տեղ դաստիարակութիւնը սիրել։ Պատրաստ եմք մեր անձը, մեր ստացուածքը քեզ համար ղոհ մատուցանել. կ'ջանամք այսուհետև քո արժանայիշատակ անունը արժանաւոր զաւակ լինիլ և Հայաստանի համար մայրասէր որդիք պատրաստուիլ"։

Յարութիւն Ս. Աղաջանեանց
է Նոր։

Խմբագրութեան Աբրահամ Ամառգոյ

Վրաստանի Քարթլ նահանգի մէջ Ախալքալաք գիւղն, որ Գորի քաղաքից հեռի է իրրև քըսան ասպարիզով, և կ'անկանի Նորա արևելեան հարաւային կողմը. իւր մեծատարած արդաւանդ դաշտօրէիւք, Գետակներու և առուակներու ընթացքով, իւր զօրավար և բարեխառն օդոյն քաղցրութեամբ, հարթաձաւալ դրիւք և բնդմեաւոր այգեաց, բուրաստանաց և ծառախիտ պարտիզաց առատութեամբ հետաղօտ ճանապարհորդի մը աչաց առաջ բնութեան գեղազուարճ տեսարաններէն մեկն կարէ համարուիլ։ Այս գիւղիս մէջ մեր աղգէն կ'գտնուի մօտ երկու հարիւր տուն բնակիչ, որոնք ըստ բանաւոր աւանդութեան՝ գաղթական կ'կարծուին Հայաստանի Արցախ և Գանձակու նահանգներէն, և ունին մի փոքրիկ եկեղեցի յանուն Աստուածածնայ կուսին։ Այս ժողովուրդ կիսով մասամբ կ'զբաղին երկրագործութեամբ, որոց անխնջ վաստակոց՝ բնութիւնն չի զլանար հատուցանել իւր լիաբաշխ ծոցէն բերոց և արմտեաց առատաձեռն տոկոսիք. իսկ մնացեալք երկրագործութեամբ և գիւղին պիտոյից համեմատ արուեստներով։ Ընդ հանրապէս զուրկ են Հայկական լեզուախօսութենէ, բայի մեկ քանիսից, որոնք զանազան քաղաքները առևտրական յարաբերութեամբ մասնաւորապէս Հայերէնի ընտելացած են։ Ուստի մերազնեայ հայրենասէր ուղղափառներէն մեկն թէպէտ և 'ի սկզբան՝ ինչպէս որ նահանգիս շատ գիւղօրայքը, նոյնպէս և այս գիւղը մրատած ժամանակ կ'ստիպուի իւր բնական լեզուն թողուլ, իւր համարիւն եղբարց հետ օտար բարբառով խօսիլ, որով և իրաւացի տխրութեամբ զգածուիլ. սակայն ոչ սակաւ կ'մխիթարուի, երբոր իւր քաղքը երկուստեք ցանկապատ այգեաց ճանապարհով դէպի գիւղին միջավայր ընդ հարաւ յառաջ կ'վարէ. վասնզի նոյն ժամայն կ'հնչեն իւր ականջին Հայկական լեզուախօսութեան և ընթերցանութեան ձայներ մանկական բերաններէն՝ զատատուութեամբ մի եկեղեցական պաշտօնէի, որն որ նահապետական հիւրասիրութեան ժպիտ երեսին ուրախութեամբ ուղևորին կ'ընդառաջէ, զրկաբաց սիրով իւր տունը կ'հրաւիրէ և սիրալեր հացկերութիւով կ'պատուէ։ Այս բարեմիտ եկեղեցական Յովհաննէս Քահանայ տէր Գալստեանցն է. որ ոչ միայն հիւրընկալութեամբ, մարդասիրական զգացմամբ և համեստ անշահախնդիր բնաւորութեամբ հռչակուած է, այլև Տփխիսու Ներսիսեան դպրոցի մէջ դուիլի յառաջադիմութեամբ իւր ուսման ընթացքը աւարտելով, այս գիւղիս վերայ հովուական պաշտօն ստանալու օրէն սկսեալ չկամեցաւ իւր բանաւոր հօտին բարոյական հարուածոց վերայ անտարբեր աչք նայիլ, այլ զանազան արգելքներու յաղթելով և կանխակալ պաշարմանց դէմ մաքառելով, սկսաւ գիւղական Հայ օրիորդները և տղայքը ձրի դաստիարակութեամբ և շատ անգամ ձրի մատեաններ բաշխելով կրթել 'ի Հայ, Թուս և 'ի Վրաց լեզուս։ Թող այսմ վկայեն անաչառապէս բազմաթիւ այցելու ականատեսք. Ո՛չ այսչափ միայն, այլև այս բարեջան Քահանային

բազմամեայ Թախանձագին խնդրանաց և հետամուտ ջանից արդիւնքն է, որ մօտերս տեղւոյն Վ.րացի իշխանազունք հաճեցան նոյն գիւղի մէջ տեղ գտնուած վաղօրեայ իրենց պատկանեալ ամրոցը գրաւոր հաստատութեամբ ընծայել եկեղեցւոյն Հայոց, որ վեց հազար րուբլիէն աւելի արժողութիւն ունի։ Այս ամրոց տեղական բնակչաց պատմութեան նայելով՝ շինուած է Վ.րացի իշխաններէն Կովկասային լեռնականաց Վ.րաստան յարձակման ժամանակը. ուր կ'ամրանայր ժողովուրդ նոցա ասպատակութենէն ազատ մնալու համար։ Աչա սորա յարմարաւոր և բաւական ընդարձակ տեղւոյն վերայ արդէն մտադիր են Հայազգի ժողովրդականք յորդորանօք և գլխաւոր ձեռնարկութեամբ Սոյն Քահանայիս կառուցանել եկեղեցի և կից նմին մի եկեղեցական դպրոց։

Պիտի գա՞յ արդեօք այն ցանկալի ժամն, որ նահանգիս ամէն Հայաբնակ գիւղօրէից բարեկրօն եկեղեցականներ ընդհանրապէս՝ այս և այլ սոցա նման օրինակներու հետեւելով, իրենց սրբազան պարտաւորութեան համեմատ աշխատէին միանգամայն իրենց հաւատացեալ հօտին մտաւոր և բարոյական զարգացման վերայ. ջանային շարունակել միշտ և անդադար քարոզութիւններով ժողովրդոց սրտին մէջ Հայկական լեզուի և ուսման խորժակ տարրացնել։ Դպրոց բանալու անձեռնահաս տեղերը, գէթ առտնին դաստիարակութեամբ Հայկազուն տղայքը և օրիորդները իրենց մայրենի լեզուով կրթել. որով ամէն վնասակար հետեւանաց առաջն առնելով, մեր ուղղափառ սուրբ կրօնը և ազգայնութիւն ապահովել համաձայն կամաց Աստուածարեալ Վ.եհափառ Հայրապետի Ազգիս՝ Տ. Տ. Գէորգայ։ Յուսով եմ որ, այժմ հասկացած են յիշատակեալ պատուարժան սրբազնագործ Հայրեր, թէ պճնազարդուց . . , պաշտօնի, կերակրոյ, ըմպելեաց մէջ փառք չ'ի որոնուիլ, այլ յօգուտ Ազգի և Եկեղեցւոյ անկեղծ և ճշմարիտ գործունէութեան մէջ։ Հասկացած են, որ իրենց պարտք ժողովրդոց կրօնական կարիքը լցուցանելը հետ կից է և անբաժանելի, Հայկազուն անմեղ՝ ուսումնակարօտ զաւակները Հայկական դաստիարակութեան կաթով սնուցանել։ Անշուշտ եմ, որ մեր Վ.եհափառ Հայրապետի՝ Գորի տէր Ստեփանեանց տան դաշլիճում սրտաշարժ առենախօսութեան և պատկառելի հրամայողական Ազգաշահ պատուէրները ազդած պիտի լինին սոցա սիրտը, վերջացնել իրարու հետ օտար բարբառով խօսելու պախարակելի և վնասակար սովորութիւնը, որով յանձնէ օրինակ տալ ժողովրդեան ,,նախ առնել և ապա ուսուցանել,,. կարծեմ որ վերջացած պիտի լինի սոցա մէջէն այն եպերելի ցանկութիւնն, որով աչք և այլ պատճառներով գիւղը թողուցած քաղաքը կ'վազէին պաշտօններ գտնելու, մինչդեռ բժիշկ հիւանդաց պէտք է և ոչ ողջոց։ Յուսով եմ որ անհետացած պիտի լինի ոմանց և այն անհոգութիւն, որով կ'հեղգային երկու փոխասաց կամ դպիր տղայք պատրաստել եկեղեցւոյ համար, այլ պատարագի օրերը քաղաքի եկեղեցական դպրոցէն թախանձանօք մէկ երկու աշակերտ կ'տանէին, և օրերով նոցա ուսումնական դասից ետ մնալու աւիթ կուտային։

Հաղորդելով . . . Խմբագրութեանդ այս մասնաւոր տեղեկութիւնները, կ'խնդրեմ հրատարակել պատուական Արարատ Ամսագրոյ միջոցաւ։

Մաղաք Պլուղեան։

ի 6-ն Մայիսի 1870 ամի

ի Տփխիս

ԲԻՒԶԱՆԴԵԱՆ ՍՈՒՐՀԱՆԴԱԿՔ.

Ապրիլ 11 ամսաթուով և 1208 համար Մանզումէի մէջ կը կարդացուի, զի Մեծազնեայ Վ.սեմ. Նուպար Բաշայն՝ Բերայի դպրոցաց աղքատ տղայոց համար հանդերձներ շինել տալու գովելի նպատակաւ՝ հազար ֆրանք ընծայած է։

Նմանապէս նոյն օրագրոյ մէջ 'ի լոյս հրատարակուած է, թէ Վ.սեմ. Յակոբ էֆէնտի Կէօչէեանցի կողմանէ Ս. Զատկի առթիւ՝ թէ Հայ և թէ Հայ—Հռովմէական աղքատացնուիրուած և բաժանուած է հաւ՝ եղ և բրինձ։

Ապրիլ 26 համարաւ 129 Մեղուին մէջ հրատարակուած է 'ի լոյս, զի Հռովմէականաց Ս. Յակոբայ հիւանդանոցը Ունիթօրք (Հասունեան